

## ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Մտավոր սեփականություն հասկացությունը եւ դրա պահպանության անհրաժեշտությունը

□ «Մարդկային հանճարը արվեստի եւ գյուտերի բոլոր ստեղծագործությունների աղբյուրն է: Այդ ստեղծագործությունները մարդու արժանի կյանքի երաշխիքն են: Պետությունը պարտավոր է ապահովել արվեստի եւ գյուտերի բոլոր տեսակների հուսալի պահպանությունը» (ք. ժնեւ, ՄՍՂԿ, Արպատ Բոզշ).

□ Մտավոր սեփականության պահպանությունն անհրաժեշտ է հասարակության եւ տնտեսության զարգացման համար: Միայն ՄՍ հուսալի եւ արդյունավետ պահպանությունն է թույլ տալիս իրավատերերին իրականացնելու ավելի արդյունավետ գործունեություն, դրանով իսկ խթանելով տնտեսության զարգացմանը:

## 2. Մտավոր սեփականություն՝ արդյունաբերական սեփականություն

2.1. Գյուտի, օգտակար մոդելի եւ արդյունաբերական նմուշի (այսուհետ նաեւ՝ օբյեկտ) իրավական պահպանությունը որպես դրանց նկատմամբ իրավունքների վերապահման մեխանիզմ, որի գործողությունը սահմանափակված է ժամանակի եւ տարածքի մեջ:

- Չեղինակը որպես օբյեկտի ստեղծման համար անհրաժեշտ ստեղծագործական աշխատանք իրականացնող սուբյեկտ, նրա անձնական իրավունքները
- արտոնագրատերը, արտոնագրի ձեռք բերման հնարավոր եղանակները, արտոնագրատիրոջ եւ հեղինակի փոխհարաբերությունների պայմանագրային կարգավորումը.
- Արտոնագրատերը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց արգելել արտոնագրով պահպանվող արդյունաբերական սեփականության օբյեկտն օգտագործել առանց իր թույլտվության, ինչպես նաեւ օգտագործել այն իր հայեցողությամբ, եթե դա չի խախտում այլ արտոնագրատերերի իրավունքները.

□ Արտոնագիրը որպես արտոնագրատիրոջ եւ հասարակության միջեւ «պայմանագիր», որով հաստատվում է արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման բացառիկ իրավունքը, օբյեկտի առաջնությունը եւ օբյեկտի նկատմամբ հեղինակությունը.

□ Արտոնագիր ստանալու պայմանները (արտոնագրաունակության պայմանները), ոչ արտոնագրաունակ օբյեկտները.

□ Արտոնագիր ստանալու ընթացակարգը.

□ Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի օգտագործում է համարվում այն պարունակող արտադրանքի պատրաստումը, կիրառումը, վաճառքի առաջարկությունը, վաճառքը, պահեստավորումը, ներմուծումը եւ տնտեսական շրջանառության մեջ մտցնելու մյուս գործողությունները, ինչպես նաեւ գյուտի արտոնագրով պահպանվող եղանակի կիրառումը.

□ Իրը համարվում է արտոնագրված արդյունաբերական նմուշ պարունակող, եթե դրա մեջ օգտագործված են արդյունաբերական նմուշի բոլոր էական հատկանիշները.

□ Կան արտոնագրված օբյեկտների օգտագործման որոշակի գործողություններ, որոնք չեն դիտվում որպես արտոնագրատիրոջ բացառիկ իրավունքի խախտում: Վաղորոք օգտագործման իրավունքը.

□ Օբյեկտների օգտագործման իրավունք տալու՝ լիցենզային պայմանագրերի առանձնահատկությունները՝ կախված օգտագործման տրվող իրավունքների ծավալից, ժամանակից եւ տարածքային սահմանափակումից.

□ Հարկադրական լիցենզիա՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, հասարակության շահերից ելնելով կամ արտակարգ իրավիճակներում, ինչպես նաեւ պետության կողմից ոչ առեւտրային օգտագործման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն առանց արտոնագրատիրոջ համաձայնության իրավասու է օգտագործել

կամ լիազորել երրորդ անձանց օգտագործելու գյուտը, օգտակար մոդելը, արդյունաբերական նմուշը (հարկադրական լիցենզիա)՝ դրա մասին 10-օրյա ժամկետում իրազեկ պահելով արտոնագրատիրոջը եւ նրան ապահովելով համարժեք դրամական փոխհատուցում. TRIPS-ը հարկադրական լիցենզիայի մասին՝ դա պետք է լինի միայն ներքին շուկայի պահանջները բավարարելու համար, այդ թվում՝ հակամրցակցային պրակտիկան շտկելու նպատակով, լիցենզիայի գործողությունը պետք է անհապաղ դադարեցվի հենց որ դրան հանգեցնող հանգամանքները վերանան. հարկադրական լիցենզիան չի կարող լինել առանձին փոխանցման առարկա, այն կարող է փոխանցվել միայն տվյալ ձեռնարկության կամ նրա համապատասխան մասի հետ. **եթե երկրորդ** արտոնագրի օգտագործումը պայմանավորված է **առաջին** արտոնագրի օգտագործման անհրաժեշտությամբ, ապա հարկադրական լիցենզիան տրվում է, եթե առաջինի համեմատությամբ երկրորդը ներառում է շատ կարելուր տեխնիկական նվաճում, որն ունի մեծ տնտեսական նշանակություն. այս դեպքում լիցենզիան կարող է փոխանցման առարկա դառնալ միայն երկրորդ արտոնագրի փոխանցման հետ միասին, իսկ առաջին արտոնագրատերը իրավունք ունի փոխադարձ լիցենզիա ստանալու ողջամիտ պայմաններով:

□ Գյուլտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի արտոնագրումն օտարերկրյա պետություններում.

□ Արտոնագրային համագործակցության մասին (PCT) պայմանագիրը.

□ Եվրասիական արտոնագրային կոնվենցիան որպես ԱՊՀ 9 պետություններում գործող գյուլտի միասնական արտոնագիր ստանալու մեխանիզմ.

□ Արտոնագրային իրավունքների պաշտպանության համակարգը ՀՀ-ում.

□ TRIPS համաձայնագրի առանձնահատկությունները

- արդյունաբերական նմուշների մասով՝ մանածագործական նմուշների ձեռքբերման, փորձաքննության եւ, ընդհանրապես, ցանկացած ծախսի առումով, պետք է չխոչնդոտի պահպանության տրամադրմանը.
- գյուլտերի եւ օգտակար մոդելների մասով՝

1. արտոնագիր տրվում է ցանկացած գյուտի, որը վերաբերում է տեխնիկայի որեւէ բնագավառի արտադրանքին կամ եղանակին, պայմանով, որ նա համապատասխանում է արտոնագրաունակության պայմաններին.
2. պահպանությունից կարող են բացառվել որոշակի գյուտեր, որոնց առեւտրային օգտագործման արգելքը պայմանավորված է հասարակական կարգի կամ բարոյականության պահպանման անհրաժեշտությամբ, այդ թվում՝ մարդու եւ կենդանիների կյանքի ու առողջության պահպանման, բնապահպանական նկատառումներից ելնելով եւ այլն.
3. Եղանակի առանձնահատկությունները, երբ խոսքը վերաբերում է իրավունքների խախտմանը՝ համարվում է, որ ապրանքն արտադրված է արտոնագրված գյուտի (եղանակի) կիրառմամբ, եթե ստացված արտադրանքը նոր է, մեծ հավանականություն կա, որ նույնական արտադրանքը պատրաստված է արտոնագրված եղանակի կիրառմամբ, չնայած, որ արտոնագրատիրոջ գործադրած ջանքերը հաջողությամբ չեն պսակվել. այս դեպքում արտոնագրված եղանակի չօգտագործման պարտականությունը կրում է տվյալ արտադրանք պատպաստողը

## 2.2. Ապրանքային նշանների իրավական պահպանությունը

□ Ապրանքային նշանը գրառմամբ (գրաֆիկական եղանակով) ներկայացվող նշան է (բառային՝ ներառյալ բառեր, թվեր, տառեր, անուններ, պատկերային, ծավալային, ձայնային եւ այլ գրառմամբ ներկայացվող նշաններ կամ դրանց համակցությունը, որոնք կարող են գրանցվել ցանկացած գույնով կամ գունային համակցությամբ), որոնցով որեւէ անձի ապրանքները եւ ծառայությունները համապատասխանաբար տարբերվում են այլ անձանց նույնատիպ ապրանքներից եւ ծառայություններից.



□ Նշաններին իրավական պահպանություն տրամադրելու հիմքերն են՝ օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցումը, ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված նորմերը (առանց պետական գրանցման), օրենքով սահմանված կարգով դրանց հանրահայտ ճանաչումը.

□ Նշանին իրավական պահպանություն տրամադրելու հիման վրա դրա նկատմամբ ծագում է բացառիկ իրավունք՝ այն տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու, ինչպես նաեւ այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք.

□ Բացառիկ իրավունքը գործում է նաեւ այլ ապրանքների նկատմամբ, եթե դրանց համար տվյալ նշանի օգտագործումը կարող է պատճառ դառնալ այդ ապրանքների եւ նշանի սեփականատիրոջ միջեւ կապ ենթադրելու (սպառողների կողմից), հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել նշանի սեփականատիրոջ շահերին.

□ Ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու ընթացակարգերը (գրանցումը, հանրահայտ ճանաչումը եւ միջազգային ընթացակարգով իրավական պահպանության տրամադրումը). իրավական պահպանության տրամադրումը մերժելու բացարձակ եւ հարաբերական հիմքերը.

□ Փորձաքննության որոշումները կարող են բողոքարկվել պետական լիազոր մարմնի բողոքարկման խորհրդում եւ դատարանում.

□ Կոլեկտիվ նշանները գրանցվում եւ պահպանվում են որպես որեւէ տնտեսական ընկերակցության, իրավաբանական անձանց միության կամ օրենքով սահմանված կարգով՝ անձանց ստեղծած այլ կամավոր միավորման անդամների կողմից օգտագործվող նշաններ.

□ Ապրանքային նշանի օգտագործումը եւ գրանցված նշանի պարտադիր օգտագործման ուղղակի պահանջը.

- Գրանցված նշանի օգտագործման իրավունքի տրամադրման լիցենզային պայմանագրերի առանձնահատկությունները եւ նշանի զիջումը, ինչը կարող է կատարվել բոլոր ապրանքների նկատմամբ, որոնց համար գրանցված է նշանը, կամ դրանց մի մասի համար.
  
- Նշանի գրանցման գործողության ժամկետը, դրա երկարաձգումը եւ վաղաժամկետ դադարեցման դեպքերն ու հիմքերը.

### 2.3. Ապրանքի ծագման տեղանունների իրավական պահպանությունը

- Ապրանքի ծագման տեղանունը (այսուհետ՝ տեղանուն) երկրի, բնակավայրի, տեղանքի կամ աշխարհագրական այլ օբյեկտի (այսուհետ՝ աշխարհագրական օբյեկտ) անվանումն է, որն

օգտագործվում է այն ապրանքի նշանն համար, որի առանձնահատկությունները բացառապես կամ գլխավորապես որոշվում են տվյալ աշխարհագրական տեղանքին բնորոշ բնապայմաններով եւ (կամ) մարդկային գործոններով.

□ Ի՞նչ նպատակ ունի տեղանվան գրանցումը եւ դրա օգտագործման իրավունք ստանալը, ինչպիսի՞ առավելություններ կարելի է ստանալ.

□ Գրանցված տեղանվան օգտագործման իրավունքը տրվում է կամ առանձին հայտի, կամ տեղանվան գրանցման եւ օգտագործման իրավունքի հայտի հիման վրա.

□ Տեղանվան իրավական պահպանությունն իրականացվում է դրա պետական գրանցման հիման վրա, որի համար տեղանվան գրանցման հայտ կարող են ներկայացնել այն անձինք, ովքեր հայտում նշված տեղանքում արտադրում են այն ապրանքը, որի նշանն համար խնդրարկվում է տվյալ տեղանվան գրանցումը, ինչպես նաեւ սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպություններն ու տվյալ ապրանքի արտադրությանն առնչվող իրավասու մարմինները.

□ Տեղանվան գրանցման եւ օգտագործման թույլտվության վկայագրի գործողության ժամկետները եվ դրանց վաղաժամկետ դադարեցման հիմքերը.

□ Տեղանվան ապօրինի օգտագործման կանխման մեխանիզմները եւ պատասխանատվությունը.

#### **2.4. Աշխարհագրական նշումների իրավական պահպանությունը**

□ Որպես աշխարհագրական նշում իրավական պահպանության ենթակա է այն նշանը, որն առեւտրային գործունեության մեջ օգտագործվում է որեւէ պետության տարածքից կամ այդ տարածքի որոշակի շրջանից կամ տեղանքից ծագող ապրանքը նույնականացնելու համար, եթե ապրանքի յուրահատուկ որակը, համբավը կամ այլ բնութագրերը հիմնականում վերագրվում են դրա աշխարհագրական ծագմանը.

□ Արգելվում է առեւտրային գործունեության ընթացքում աշխարհագրական նշումների օգտագործումն այն ապրանքների նկատմամբ, որոնք`

1) չեն ծագել տվյալ աշխարհագրական տեղանքից.

2) ծագել են տվյալ աշխարհագրական տեղանքից, սակայն չեն համապատասխանում նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին.

□ TRIPS-ը աշխարհագրական նշումների մասին

Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք հանդիսանում կամ պարունակում են`

ա) աշխարհագրական նշում եւ գրանցման են ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական նշմամբ տեղանքից, եթե այդ աշխարհագրական նշման օգտագործումը մոլորության մեջ է գցում սպառողին ապրանքների իրական ծագման վայրի հարցում.

բ) գինիներ անհատականացնող աշխարհագրական նշում այն գինիների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական նշանաբ տեղանքից կամ սպիրտային խմիչքներ անհատականացնող աշխարհագրական նշում այն սպիրտային խմիչքների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական նշանաբ տեղանքից, նույնիսկ եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» եւ այլ նման արտահայտությունների զուգակցմամբ.

նույնական աշխարհագրական նշումների օգտագործումը ԱՅԿ անդամների կողմից.

այլ երկրի աշխարհագրական նշումները կարող են օգտագործվել, եթե միջեւ 15.04.1994 թ դրանք օգտագործվել են բարեխիղճ կամ օգտագործվել են դրան նախորդող 10 տարիների ընթացքում

որոշակի ապրանքների անվանումների վերածված ԱՅԿ այլ անդամի աշխարհագրական նշումների նկատմամբ սահմանափակումները չեն կիրառվում, եթե դրանք վերածվել են խոսակցական լեզվի սովորական անվանումների.

## 2.4. Ֆիրմային անվանումների իրավական պահպանությունը

- Ֆիրմային անվանումը որպես առեւտրային կազմակերպության անհատականացման միջոց եւ դրա գրանցման մեխանիզմները.
- Ի՞նչ կարգով են պահպանվում օրենքով չգրանցված (մինչեւ օրենքի ուժի մեջ մտնելը գրանցված կազմակերպությունների անվանումները) ֆիրմային անվանումները. դրանց «փոխհարաբերությունը» գրանցվածների հետ.
- Ի՞նչն է համարվում ֆիրմային անվանումների օգտագործում.
- Ինչպիսի՞ առանձնահատկություններ կան այլ անձանց՝ ֆիրմային անվանման օգտագործման թույլտվություն տալու հարցում.



### 3. Հեղինակային իրավունք. Հարակից իրավունքներ.

#### Դրանց իրավական պահպանությունը

Հեղինակային իրավունք. գրականության, գիտության, արվեստի բնագավառների ստեղծագործությունների նկատմամբ իրավունքները, որոնք տարածվում են տվյալ ստեղծագործությունների արտահայտման ձևի նկատմամբ .

Հեղինակային իրավունքի ծագումը.

Հեղինակը որպես հեղինակային իրավունքի իրավատեր. համահեղինակներ.

Հեղինակի անձնական իրավունքները եւ դրա պահպանությունը.

Հեղինակի գույքային իրավունքները եւ դրա պահպանությունը.

□ Հեղինակի բացառիկ իրավունքների փոխանցումն այլ անձանց. պայմանագիրը. ի՞նչ է անհրաժեշտ նախատեսել այդ պայմանագրով. հեղինակային իրավունքի անցնելը ժառանգաբար եւ իրավահաջորդության կարգով.

□ Ծառայողական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքը.

□ Որոշ ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի առանձնահատկությունները (տեսալսողական, արվեստի, ածանցյալ, ժողովածու, կոլեկտիվ ստեղծագործությունների).

□ Չարակից իրավունքներ. կատարողների՝ իրենց կատարումների, հնչյունագրեր արտադրողների՝ իրենց պատրաստած հնչյունագրերի, ֆիլմ արտադրողների՝ իրենց ամրագրած ֆիլմերի, հեռարձակող կազմակերպությունների՝ իրենց հաղորդումների, հրատարակիչների՝ իրենց հրատարակությունների տպագրական ձեւավորումների, տվյալների բազաներ պատրաստողների՝ իրենց պատրաստած տվյալների բազաների նկատմամբ իրավունքները.

□ Չարակից իրավունքների պահպանության կարգը եւ պայմանները.

□ Գույքային իրավունքների արդյունավետ կառավարումը.

□ Չեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանության

մեխանիզմները.

#### 4. Մտավոր սեփականությունը՝ մտավոր եւ այլ գործունեության հետ կապված այլ իրավունքներ

4.1. Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների պահպանությունը. 10 տարի է, հայտ  
ներկայացնելու օրվանից կամ առաջին օգտագործման օրվանից

4.2. Չբացահայտված տեղեկատվության պահպանությունը (ՆՈՈՒ ՅԱՈՒ). պահպանվում է  
այնքանով, որքանով՝

- նա հանրահայտ չէ, այսինքն դրա բովանդակությունը բացահայտված չէ այն շրջանակների համար, որոնք սովորաբար գործ ունեն նման տեղեկատվության հետ,
- իր գաղտնիության պատճառով առելտրային արժեք է ներկայացնում,
- այդ տեղեկատվությանը օրինաչափորեն իրապետող անձի կողմից համապատասխան միջոցներ են ձեռնարկվել դրա գաղտնի պահելու համար

4.3. Անբարեխիղճ մրցակցության կանխման իրավունքը եւ դրա պահպանությունը.

4.4. Սելեկցիոն նվաճումների իրավական պահպանությունը:

4.5. TRIPS-ի ընդհանուր պահանջները

Համաձայնագրով նախատեսված պահպանության ծավալը չի սահմանափակում ավելի լայն պահպանության տրամադրումը.

- Ազգային ռեժիմը, ըստ որի այլ անդամ երկրների սուբյեկտներին տրամադրվում է ոչ պակաս նպաստավոր պայմաններ, քան սեփական սուբյեկտներին.
- առավել բարենպաստության ռեժիմը ենթադրում է, որ եթե անդամ պետություններից մեկի սուբյեկտներին տրամադրվում է արտոնություն, առավելություն կամ իմունիտետ, ապա դրանք պետք է տրամադրվեն մնացած բոլոր անդամների սուբյեկտներին, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է դատական օգնության կամ ընդհանուր իրավասության օրենքների կատարման վերաբերյալ միջազգային պայմանագրերից եւ չեն վերաբերում միայն մտավոր սեփականության պահպանությանը, ինչպես նաեւ այն դեպքերի, երբ դա նախատեսված է մինչեւ ԱՀԿ պայմանագիրն ուժ մեջ մտնելն ուժի մեջ մտած միջազգային պայմանագրով:

□ Քաղաքացիաիրավական եւ վարչական ընթացակարգերը, դատական

պաշտպանության միջոցները

- ապացույցները
- դատական արգելանքները

- վնասների հատուցումը
- կեղծ ապրանքների առգրավումն ու ոչնչացումը դատական ակտի հիման վրա, կեղծ ապրանքների արտադրության միջոցների առգրավումը
- պատասխանողի կրած վնասների հատուցումը

□ Ժամանակավոր միջոցները որպես իրավախախտումների կանխմանն ուղղված անհապաղ ընդունված դատական ակտեր`

□ Հատուկ պահանջներ սահմանային միջոցների նկատմամբ. մաքսային օրենսդրությունը, նվազագույն քանակով ներմուծում

□ վեճերի կանխարգելումը եւ կարգավորումը

- TRIPS-ի խորհուրդը, որն իրազեկվում է օրենքների, դատական վճիռների եւ այլ իրավական ակտերի մասին, որպեսզի Խորհրդին աջակցեն իրականացնելու Չամաձայնագրի իրականացման վերահսկողությունը: